



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՇԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 13 » 10 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000084

Ձեռնարկողը՝

«ՀԵՆԴՀԱՅ» ՍՊԸ

ք. Գյումրի, Բուլվարային 1 փկղ., պոռն 27

Գործունեությունը՝

Բասենի դացիպային տուֆերի երևակումում 2020-2021թթ. կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Շիրակի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Թարգյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000084

<<13>>10 2020թ.

Շիրակի մարզի Բասենի դացիտային տուֆերի երևակումում 2020-2021թթ. կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝

«ՀԵՆԴՀԱՅ» ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝

Երկրաբանական ուսումնասիրության
նախնական գնահատման հայտ
«Գ» կատեգորիա

Գտնվելու վայրը՝

Շիրակի մարզ

Նախնական գնահատման հայտով նախատեսվում է 2020-2021թթ. ընթացքում Շիրակի մարզի Բասենի դացիտային տուֆերի երևակման տարածքում իրականացնել օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ: Երկրաբանահետախուզական աշխատանքները կատարվելու են «ՀԵՆԴՀԱՅ» ՍՊ ընկերության նախաձեռնությամբ և ֆինանսական միջոցների հաշվին:

Նախատեսվող գործունեությունը՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետի հանդիսանում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Երկրաբանահետախուզական աշխատանքների նպատակը՝ «Բլոկներ՝ բնական քարերից երեսապատման իրերի արտադրության համար» (ըստ 9479-98 ԳՈՍՏ-ի) և «Շինարարական քարեր տուֆերից, բազալտներից ու տրավերտիններից» (ըստ 100-95 ՀՍՏ ԳՈՍՏ-ի) հումքի գնահատում, պաշարների հաշվարկ՝ հանքավայրի հետագա շահագործման համար:

Բասենի երևակումը գտնվում է Շիրակի մարզի Բասեն գյուղից 1,5կմ դեպի հարավ՝ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Բասեն բնակավայրի վարչական սահմաններում: Գյումրի քաղաքի հետ կապված է 20-25կմ երկարությամբ ասֆալտապատ ճանապարհով:

Երկրաբանահետախուզական աշխատանքների համար ուսումնասիրվող տարածքը շատ հարմար է, քանի որ տեղամասը քարքարոտ է, ամայի, զուրկ բուսականությունից, գյուղատնտեսության համար ոչ պիտանի:

Ուսումնասիրվող տեղամասը գտնվում է ծ.մ. 1640-1655մ բարձրության վրա՝ զբաղեցնելով մոտ 3.82հա տարածք: Ուսումնասիրվող տարածքի ծայրկետների կոորդինատները՝ ըստ ARM WGS համակարգի հետևյալն են.



1. X=4512371	Y=8414767
2. X=4512269	Y=8414770
3. X=4512125	Y=8414530
4. X=4512210	Y=8414476
5. X=4512273	Y=8414585
6. X=4512391	Y=8414625

Տարածքը գտնվում է կլիմայական ցուրտ գոտում, որտեղ հունվարի միջին ջերմաստիճանը տատանվում է -5°C մինչև -12°C , հուլիսին միջին ամսական ջերմաստիճանը՝ $+16^{\circ}\text{C}$ և ցածր: Ձմեռը ցուրտ է, գարունը երկարատև է և ցուրտ: Ամառը կարճ է՝ զով և խոնավ փոփոխական եղանակով: Աշունը սառն է: Ըստ մոտակա Գյումրի օդերևութաբանական կայանի տվյալների՝ տարվա միջին ջերմաստիճանը $+6.3^{\circ}\text{C}$, բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -36°C , իսկ բացարձակ առավելագույնը՝ $+38^{\circ}\text{C}$: Երևակման տարածքի օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշները գտնվում են սահմանային թույլատրելի նորմերի սահմաններում:

Հանքերևակման տարածքում գրունտային ջրերն ու աղբյուրները բացակայում են: Տարածքի խոշորագույն ջրային միավորը Արփա լճից սկիզբ առնող Ախուրյան գետն է իր Ղուկասյան և Յողամարգ վտակներով:

Փոշեառաջացման օջախների ջրցանման, ինչպես նաև խմելու նպատակով օգտագործվելիք ջրերը կբերվեն մոտակա Բասեն բնակավայրի համապատասխան ցանցերից:

Շրջանը համատարած ծածկված է լեռնային սևահողով, ալպյան մարգագետիններով:

Համաձայն նախնական հայտի Բասենի դացիտային տուֆերի երևակման շրջանում զարգացած են սևահող ալրային կարբոնատային հողեր: Այս հողերն ունեն պարզ շերտավոր կառուցվածք, մեծ հզորություն և թեթև մեխանիկական կազմ (ավազային, կավավազային) և հատկականծիկային ստրուկտուրա: Հումուսի պարունակությունը 1,5-2-ից մինչև 4-6%: Հողային լուծույթի ռեակցիան հիմնականում չեզոք է կամ թույլ հիմնային: Կլանման տարողությունը մեծ չէ (15-25 մ.էկվ 100գ հողում), կլանված կատիոնների կազմում գերակշռողը կալցիումն է:

Նախատեսվող գործունեության համար հայցվող հողերը գյուղատնտեսական նշանակության արոտավայրեր են: Հողաբուսական շերտը տեղամասում ունի ոչ համատարած տարածում, դրա հզորությունը կազմում է 0-0.4մ, միջինում՝ 0.2մ:

Լանդշաֆտը տիպիկ լեռնային է, խիստ կտրտված ռելիեֆով, որը ներկայացված է լեռնաշղթաներով, հրաբխածին հարթավայրերով նեղ և խորը կտրտված գետահովիտներով: Բուն տեղամասը ներկայացված է բլրային տարածքով, որին բնորոշ է սակավաթեք ռելիեֆ:

Գործունեության ենթակա տարածքը երկրաբանական ուսումնասիրության նպատակով սողանքավտանգ չէ: Տեղամասի տարածքում սողանքային մարմիններ չկան: Մոտակա սողանքային/սողանքավտանգ տեղամասերը գտնվում են ավելի քան 4կմ հեռավորության վրա:

Ուսումնասիրվող տարածքը տեղակայված է Շիրակի ֆլորիստիկ շրջանում, որտեղ բուսականության տիպը հիմնականում կիսաանապատային, տափաստանային և մարգագետնային է: Հիմնական բնական բուսածածկը՝ հացազգային և տափաստանահացազգային է:

Կենդանական աշխարհը բնութագրվում է համեմատաբար աղքատ և միատեսակ անողնաշարավոր կենդանիներով, թռչուններով, կաթնասուններով:



Տեղամասի տարածքում կենդանական աշխարհի ներկայացուցիչների բներ, բնադրավայրեր չեն դիտարկվել:

Համաձայն հայտի երկրաբանական հետախուզման բուն երևակման տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, վտանգված էկոհամակարգեր, պատմամշակութային հուշարձաններ, անտառային տարածքներ չկան:

Բասենի դացիտային տուֆերը նախատեսվում է ուսումնասիրել որպես երեսապատման նյութ և շինարարական պատքար: Նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից, հետախուզահորերից, փորձական բացահանքից և բնական մերկացումներից:

Աշխատանքների դաշտային փուլը կտևի 1-2 ամիս:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները կարճատև են, ծրագրավորվող աշխատանքները՝ փոքրածավալ:

Երևակման հյուսիսային մասում, բնական մերկացման սահմաններում տուֆերի ներքին սահմանների եզրագծման, ուսումնասիրման և նմուշարկման համար նախատեսվում է մերկացման հատակից անցնել 2 մետր խորությամբ ($1 \times 1.25 = 1.25 \text{մ}^2$) կտրվածքով՝ 1 հետախուզահոր, որը անհրաժեշտ չափումներից և նմուշարկումից հետո հետ է լցվում:

Այդ աշխատանքը կիրականացվի մեխանիկական եղանակով և ձեռքով՝ առանց պայթուցիկ նյութերի կիրառման:

Հորատման աշխատանքները կիրականացվեն սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով: Հորատումը կկատարվի կարծր համաձուլվածքային թագիկներով՝ 93մմ տրամագծով: Նախատեսվում է հորատել մինչև 4-10մ խորության 6 հորատանցքեր՝ 45մ ընդհանուր ծավալով, հորատահանուկի նվազագույն՝ 82 % ելքով:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է.

- հորատանցքերից առաջինը կնմուշարկվի անընդհատ, մնացածը ընդհատվող տիրույթներով: Հորատահանուկի նմուշների սեկցիայի երկարությունը մինչև 5մ: Հանուկային նմուշների ընդհանուր քանակը կկազմի 8 նմուշ (40մ),
- մենաքարերի վերցնում հետախուզահորից և փորձական բացահանքից մեկական հատ: Մենաքարերի ընդհանուր քանակը կկազմի 2 ($20 \times 20 \times 20$ սմ չափսերի) հատ,
- քիմիական կազմը որոշելու նպատակով նախատեսվում է վերցնել 2 ակոսային նմուշ, իսկ քարաբանական կազմի որոշման նպատակով՝ 2 հղկուկային նմուշ:

Նախատեսվում են նաև ռադիոմետրիկ ուսումնասիրություններ՝ օգտակար հանածոյի ռադիացիոն-հիգիենիկ հատկությունների ուսումնասիրման նպատակով:

Դացիտային տուֆերի քիմիական կազմը կորոշվի 2 նմուշների քիմիական անալիզով, ֆիզիկամեխանիկական հատկանիշները կուսումնասիրվեն 10 նմուշներով՝ 2 լրիվ, 8 կրճատ փորձարկման ծրագրով: Քարաբանական և միներալոգիական ուսումնասիրություններ կկատարվեն 2 հղկուկների միջոցով:

Լաբորատոր ուսումնասիրությունները կկատարվեն համապատասխան մասնագիտացված լաբորատորիայում:

Լեռնային զանգվածից պիտանի բլոկների ելքի որոշման համար, ուսումնասիրվող տարածքի հյուսիսային մասի գոյություն ունեցող մերկացումից նախատեսվում է 1 փորձնական բացահանքի անցում՝ $10 \times 5 \times 2,4 = 120 \text{մ}^3$ ծավալով, որից 20մ^3 դեյուվիալ առաջացումներից ու հողմահարված տուֆերից, իսկ 100մ^3 չհողմահարված թաքում ապարներից:

100մ^3 չհողմահարված թաքում տուֆերից 2-րդ և 3-րդ կարգի բլոկները մոտ 35մ^3 ծավալով ավտոտրանսպորտով կտեղափոխվեն 10կմ հեռավորության վրա, Ախուրյանի միտակայքում



գտնվող «ՀԵՆԴՀԱՅ» ՍՊ ընկերության սեփական քարամշակման արտադրամաս՝ սղոցման և սալիկների ելքի որոշման նպատակով, իսկ 4-րդ կարգի բլոկներից մի մասը՝ կօգտագործվի պատքարի ելքի որոշման համար, իսկ մնացածը՝ կպահեստավորվի բացահանքի տարածքում:

Այս աշխատանքները կկատարվեն մեխանիկական հորատասեպային եղանակով, օգտագործելով բուլդոզեր:

Ծրագրով նախատեսված հիմնական աշխատանքներին զուգընթաց իրականացվելու են ռադիոակտիվ տարրերի ուսումնասիրություններ: Ուսումնասիրվող տեղամասում նախատեսվում է կատարել ստուգիչ ռադիոմետրիական ուսումնասիրություններ, պարբերաբար 20 օրը մեկ՝ իրականացնելով ռադիոմետրիկ էտալոնացման ու զգայունության ստուգում:

Հաշվի առնելով երևակման հարթ ռելիեֆը, ինքնագնաց հորատող հաստոցի, ուղեկցող տեխնիկայի և աշխատակիցների մոտեցումը հորատման հարթակներին կիրականացվի օգտագործելով գոյություն ունեցող ճանապարհները՝ դրանք կարգի բերելով: Նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում:

Հաշվի առնելով երևակման հարթ ռելիեֆը հորատման հարթակների շինարարության նպատակով անհրաժեշտ կլինի ընդամենը հորիզոնականին մոտ դիրքի բերել հորատման հաստոցի տեղադրման վայրը:

Ընդամենը նախատեսվում է նախապատրաստել 6 հորատման հարթակ, յուրաքանչյուրը $4 \times 8 = 32 \text{մ}^2$, ընդհանուր՝ 192մ^2 մակերեսով, մոտ՝ 38.4մ^3 ծավալով:

Հանված հողերի պահպանման հատուկ պայմաններ չեն նախատեսվում, քանի որ յուրաքանչյուր հորատանցքի հորատումը կտևի 2 օրից ոչ ավել, որից հետո հարթակը կվերականգնվի:

Փորձնական բացահանքի տարածքում առկա է մոտ միջինը 10սմ հզորությամբ հողաբուսաշերտ: Այն նախատեսվում է հանել և կուտակել դրա համար նախատեսված վայրում՝ ռեկուլտիվացման աշխատանքների համար, փորձնական բացահանքի իրականացումից հետո: Նշված աշխատանքների իրականացման ժամանակ նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի թիվ 1404-Ն որոշման պահանջներով:

Հաշվի առնելով երևակման հարթ ռելիեֆը, հորատման հարթակների շինարարության նպատակով անհրաժեշտ կլինի ընդամենը հորիզոնականին մոտ դիրքի բերել հորատման հաստոցի տեղադրման վայրը:

Խախտված հողերի վերականգնման աշխատանքների ծավալները գնահատվում են փորձնական հանույթի համար՝ $10 \times 2,4 \times 0,1 = 2,4 \text{մ}^3$ հողաբուսաշերտի ծավալով, հորատման հարթակներ՝ $32 \times 6 \times 0,2 = 38,4 \text{մ}^3$: Վերականգնումը կատարվելու է ձեռքով՝ III-րդ կարգի գրունտներով:

Ընդամենը խախտված $40,8 \text{մ}^3$ հողաբուսաշերտի վերականգնման համար անհրաժեշտ ծախսը կկազմի $40,8 \text{մ}^3 \times 2800 = 114000$ ՀՀ դրամ:

Փռված մակաբացման ապարները կփխրեցվեն, ինչը թույլ կտա ապահովել նոսր բուսականության արագ վերարտադրությունը և վերականգնել բնական լանդշաֆտային պայմանները:

Բասենի դացիտային տուֆերի երևակման տարածքում «ՀԵՆԴՀԱՅ» ՍՊ ընկերության կողմից երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում անշան տեխնաժին ճնշումներ են դրսևորվելու մթնոլորտի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա:

Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ հանքերևակման տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:



ափսոսելով, որմատի
ակը:
իսկաճ տարածքներ
դրեցվե, ինչը թույլ կտ
թյունը և վերականգն

Պատճառաբանական եզրահանգումներ

Նախնական գնահատման հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, Շիրակի մարզպետարանը և այլ գերատեսչություններ:

Փորձաքննության ընթացքում նախագիծը շրջակա միջավայրի նախարարության դիտողություններով ու առաջարկություններով լրամշակվել է:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Ախուրյանի համայնքի Բասեն բնակավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հանրությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացնել հողի, օդի, ջրերի, կենսաբազմազանության մոնիթորինգ և արդյունքները ներառել մոնիթորինգի պլաններում:
- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական բոլոր նորմերը:
- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հայտում ներառել ազդեցությունների հետ կապված առողջապահական գործոնների վերլուծությունը, մասնավորապես՝ սանիտարապաշտպանիչ գոտու և աշխատողների կենցաղային պայմանների վերաբերյալ տվյալները:
- Նախատեսված երկրաբանահետախուզական աշխատանքներն իրականացնել ըստ ներկայացված ժամանակացույցի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀԵՆԴՀԱՅ» ՍՊ ընկերության կողմից նախատեսվող Շիրակի մարզի Բասենի դաջիտային տուֆերի երևակումում 2020-2021թթ. կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝

Մասնագետ՝



Գ. Գևորգյան

Մ. Ավետիսյան